ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 ապրիլի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

45
(3254)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը պաշտոնի է նշանակվել 2022 թվականի մարտի 3-ին: Մինչ այդ նա զբաղեցրել է տարբեր պաշտոններ պետական համակարգում եւ հանրային կառույցներում. դեռեւս 2002 թվականին աշխատել է Կալավանի համայնքապետարանում՝ որպես աշխատակազմի քարտուղար, ապա 2017-2018 թվականներին՝ Ճամբարակի համայնքապետարանում՝ որպես համայնքի ղեկավարի օգնական եւ խորհրդական:

2013-2019 թվականներին Ղուկասյանը եղել է «Թայմ Լենդ» հիմնադրամի հիմնադիր տնօրեն, իսկ 2019-2022 թվականներին զբաղեցրել է վարչապետի խորհրդականի պաշտոնը: Նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է պաշտոնյայի հայտարարագրերը՝ պարզելով, որ վերջին տարիներին նրա գույքային եւ ֆինանսական վիճակը ենթարկվել է էական փոփոխությունների:

Հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչեւ 2023 թվականը Սյունիքի մարզպետը չի ունեցել անշարժ գույք, սակայն 2024 թվականի հայտարարագրում արդեն հանդես է գալիս որպես հողամասերի սեփականատեր: Միաժամանակ, նրա ֆինանսական հոսքերը եւ հայտարարագրված գործարքները նույն ժամանակահատվածում զգալի ակտիվություն են ցուցաբերել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Armlur.am-ը տեղեկացավ, որ ապրիլի 20-ին ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը արտահերթ նիստ է հրավիրել: Ըստ մեր տեղեկությունների՝ այդ օրը խորհրդարան է ներկայանալու ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, ով հանձնաժողովին կներկայացնի 2025 թվականի գործունեության տարեկան հաղորդումը՝ անդրադառնալով երկրում մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության իրական վիճակին: Սակայն այս նիստը հերթական ձեւական քննարկո՞ւմն է լինելու, թե՞ հնչելու են կոշտ հարցեր՝ տարիներ շարունակ կուտակված խնդիրների վերաբերյալ: Մինչ պաշտոնական զեկույցները հաճախ ներկայացվում են թվերի եւ ձեւակերպումների մակարդակով, իրականությունը շարունակում է մնալ մտահոգիչ՝ քաղաքացիների իրավունքների խախտումների, իրավապահ համակարգի նկատմամբ անվստահության եւ սոցիալական արդարության պակասի ֆոնին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Ամենայն հայոց կաթողիկոսի գործով մանրամասներ են հայտնի դարձել: ՀՀ գլխավոր դատախազության փոխանցմամբ՝ վերաքննիչ բողոք կներկայացնի կաթողիկոսի նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերացման դեմ: Ավելի վաղ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Անի Դանիելյանը բավարարել էր Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտպանի ներկայացրած բողոքը՝ խափանման միջոց բացակայելու արգելքը վերացնելու վերաբերյալ: Հիշեցնենք, որ նա մեղադրվում է դատական ակտի կատարմանը խոչընդոտելու մեջ: Պահանջվում է, որ կարգալույծ եղած Արման Սարոյանը վերականգնվի Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնում:



ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ հայրենի կառավարությունն այս շաբաթ խորհրդարան է գալու: Բանն այն է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ կառավարությունը պետք է ԱԺ ամբիոնից ներկայացնի ՀՀ կառավարության ծրագրի 2025 թվականի կատարման արդյունքների մասին զեկույց: Մենք տեղեկացանք, որ Նիկոլ Փաշինյանը կներկայացնի, թե կառավարությունն ինչ է արել այս տարիներին: Փաշինյանը կհայտարարի, որ 2025 թվականը ՀՀ անկախությունից ի վեր առաջին տարին է, երբ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ փոխհրաձգության հետեւանքով զոհեր կամ վիրավորներ չեն եղել: Փաշինյանի ելույթից հետո կառավարության անդամները պետք է ներկայացնեն, թե կառավարությունը ինչ ծրագրեր է իրականացրել. կարճ ասած՝ նախընտրական քարոզարշավ ԱԺ ամբիոնից:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ ԼԻՆԵԼՈՒ Է ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ»

ArmLur.am-ը զրուցել է «Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ»-ի տնօրեն Նաիրա Սուլթանյանի հետ:

- Տիկին Սուլթանյան, ապրիլի 10-ից 12-ը գտնվել եք Ադրբեջանում, եւ այս անգամ այցը տարբերվում էր նրանով, որ Ադրբեջան եք այցելել ցամաքային ճանապարհով: Կխնդրեմ ներկայացնեք Ձեր տպավորությունները. նախ՝ ինչպե՞ս հատեցիք սահմանը, եւ այդ պահին ի՞նչ զգացողություններ ունեիք:

- Սահմանը հատել ենք բոլոր ընթացակարգերին հետեւելով՝ թե՛ մեր, թե՛ իրենց կողմում: Իհարկե, զգացողությունները էմոցիոնալ առումով շատ յուրահատուկ էին, որովհետեւ, փաստորեն, հակամարտությունից հետո մենք առաջին խումբն էինք, որ ցամաքային սահմանը հատելով՝ անցել ենք Ադրբեջան: Մեզ լավ ընդունեցին թե՛ սահմանին, թե՛ արդեն սահմանից դուրս: Ընդհանուր առմամբ, եւ քննարկումները, եւ ամբողջ ընթացակարգը, որի միջով անցանք, շատ գործնական էին:

- Քննարկումները որտե՞ղ տեղի ունեցան, ինչպիսի՞ ֆորմատով էին, եւ ովքե՞ր էին մասնակցում:

- Անցած անգամ 20 հոգանոց պատվիրակություն էր մեկնել, այս անգամ եւս մեր կողմից 20 մասնակից էր մեկնել: Սահմանը հատելուց հետո ավտոբուսով գնացել ենք Գյանջա, այնտեղից գնացքով մեկնել ենք Ադրբեջանի Գաբալա քաղաք, որտեղ էլ կայացել է հանդիպումը:

- Ի՞նչ հարցեր են քննարկվել, եւ որո՞նք են այն շոշափելի թեմաները, որոնց շուրջ հնարավոր է մոտ ապագայում լուծումներ լինեն:

- Այդպես չափման միավորով չեմ կարող ասել՝ մոտ ապագայում, թե հեռու ապագայում, բայց հուսով ենք, որ բոլոր այն հարցերը, որոնք քննարկել ենք, հնարավորինս արագ կգտնեն իրենց լուծումները: Ես եւ գործընկերներիցս շատերը բարձրացրել ենք հատկապես հումանիտար հարցեր, խոսել ենք պահվող անձանց մասին եւ եւս մեկ անգամ շեշտել, թե որքան այս խնդիրը չի տեղավորվում խաղաղության տրամաբանության մեջ: Պետք է ամեն ինչ անել, որպեսզի խաղաղության գործընթացի ներկայիս արագ ընթացքը ետեւում չթողնի այսքան ցավոտ հարցեր:

Իրենց հերթին ադրբեջանական կողմը նույնպես բարձրացրել է իրենց հուզող հումանիտար հարցերը՝ ականների պայթյուններից տուժած եւ զոհված անձանց խնդիրը: Նշվել է 4302 թիվը, ինչպես նաեւ ավելի քան 3000 անհայտ կորած ադրբեջանցիների հարցը:

Երկու կողմերն էլ շատ բաց եւ անկեղծ խոսում են իրենց հուզող ու ցավեցնող թեմաների մասին: Մենք փորձում ենք այս նախաձեռնության շրջանակում լսել միմյանց, որովհետեւ երբ լսում ես եւ հասկանում նրբությունները, կարողանում ես նաեւ ավելի իրատեսական լուծումներ մոդելավորել: Մեր նպատակն է, որ այս նախաձեռնությունը նպաստի կողմերի միջեւ վստահության ամրապնդմանը, ինչը նաեւ կօգնի այդ հարցերի ավելի արագ լուծմանը:

- Ինչպիսի՞ն են հասարակական արձագանքները երկու կողմերում: Հայաստանում եւս կան տարբեր գնահատականներ այցի վերաբերյալ: Ի՞նչ են ասել Ձեզ, եւ Դուք ինչպե՞ս եք վերաբերվում այդ արձագանքներին:

- Բոլոր այն անձանց, ովքեր մեր հասցեին ատելություն կամ անեծքներ էին տարածում, երբ մենք այնտեղ աշխատում էինք, կարծում եմ՝ խոսելու բան չունեմ: Սակայն բոլոր այն մարդիկ, ովքեր քննադատում են, հարցեր ունեն կամ հակափաստարկներ են ներկայացնում, սիրով հրավիրում եմ զրույցի: Մենք այժմ իրականացնում ենք լայնածավալ խորհրդակցություններ թե՛ քաղաքացիական հասարակության, թե՛ մեդիայի, եւ թե՛ փորձագիտական համայնքի հետ, ուստի բաց ենք քննարկումների եւ առաջարկներ լսելու համար:

Ինչ վերաբերում է հասարակության արձագանքներին, երկու կողմում էլ կան տարբեր տեսակետներ ունեցող մարդիկ: Կան մարդիկ, որոնք միանշանակ աջակցում են այս գործընթացին եւ հավատում դրան, կան ավելի զգուշավոր լավատեսներ, որոնք կարծում են, որ պետք է դանդաղ ու մտածված առաջ գնալ, կան նաեւ պրագմատիկներ, որոնք խաղաղության գործընթացի հիմքում տնտեսական շահերն են տեսնում: Եւ, իհարկե, կան մարդիկ, որոնք շատ կոշտ դիրքորոշում ունեն: Այս բոլոր տեսակետները երկու կողմում էլ առկա են:

- Բայց, ի վերջո, այս գործընթացի վերջնարդյունքը ո՞րը պետք է լինի:

- Վերջնարդյունքը լինելու է խաղաղությունը՝ միանշանակ: Ես դրան հավատում եմ: Մենք ընթացքի մեջ ենք, եւ թե՛ քաղաքական, թե՛ տարածաշրջանային ու գլոբալ զարգացումները, վստահ եմ, կհանգեցնեն այդ լավագույն նպատակին:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԴԻՄԵԼ ԿԸՀ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ երեկ մեկնարկել է Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցող քաղաքական միավորների եւ կուսակցությունների առաջադրումների գործընթացը: Ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած կուսակցություններն ու դաշինքներն արդեն կարող են Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ դեռ որեւէ ուժ չի ներկայացրել փաստաթղթերը՝ գրանցման: Հիշեցնենք, որ մինչ այս պահը իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն է ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրել վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանով: «Ուժեղ Հայաստան» քաղաքական ուժը, որը ստիպված է իր «Ուժեղ Հայաստան Սամվել Կարապետյանի հետ» դաշինքի անունը փոխել եւ հեռացնել Սամվել Կարապետյանի անունը: Նրանք արդեն հայտնել են, որ իրենց վարչապետի թեկնածուն Սամվել Կարապետյանն է: Բայց քանի որ նա երկքաղաքացիություն ունի, ցուցակը անձամբ չի գլխավորի, սա կանի նրա եղբորորդին՝ կուսակցության խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանը: «Հայաստան» դաշինք-ը եւս հայտարարել է իր մասնակցության մասին՝ վարչապետի թեկնածու առաջադրելով երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, ով գլխավորում է ընտրացուցակը:

Ընտրություններին մասնակցելու մասին հայտարարել է նաեւ Գագիկ Ծառուկյանը՝ առաջնորդելով «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ «Առաջարկ Հայաստանին» նախաձեռնության ուժերով: Նա գլխավորում է կուսակցության ցուցակը, սակայն նշել է, որ վարչապետ դառնալու հավակնություն չունի. նրանք ունեն վարչապետի թեկնածու, որը ոչ նախկին է, ոչ ներկա: «Միասնության թեւեր»-ն է մասնակցելու՝ Արման Թաթոյանի դեմքով որպես վարչապետի թեկնածու:

«Հանրապետություն» կուսակցությունը՝ Արամ Զ. Սարգսանի դեմքով: «Նոր ուժ»-ը՝Հայկ Մարությանով: Պարույր Հայրիկյանը՝ ԴՈԿ կուսակցության հետ, Ռեֆորմիստները՝ Վաղարշակ Հարությունյանով եւ էլի շատ ուժեր, որոնք դեռ կհայտարարեն իրենց մասնակցության ձեւաչափի մասին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ քաղաքական ուժերը ունեն 9 աշխատանքային օր՝ փաստաթղթերը ներկայացնելու համար: Վերջնաժամկետը ապրիլի 23-ն է, որից հետո ԿԸՀ-ն կուսումնասիրի փաստաթղթերը եւ կգրանցի ուժերին կամ կմերժի դրանց գրանցումը՝ արգելելով մասնակցել ընտրություններին:

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ ԵՊԻՍԿՈՊՈՍ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ

Մայր Աթոռը հայտարարություն է տարածել. «ՀՀ վարչապետի 2026թ. մարտի 27-ի որոշմամբ Արման Սարոյանը (նախկին Գեւորգ եպիսկոպոսը) նշանակվել է «Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի» անդամ՝ որպես Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչ: Սույն նշանակումը, որը կատարված է առանց Հայ Առաքելական Եկեղեցու համաձայնության, անընդունելի է ու անօրինական, ինչպես նաեւ խախտում է ՀՀ օրենսդրությունը: Պետական կամ որեւէ այլ կառույցում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչ կարող է նշանակվել միայն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ու արտոնությամբ: Իսկ կարգալույծ հռչակված Գեւորգ եպիսկոպոսը լիազորված չէ եւ չի կարող ներկայացնել Հայոց Եկեղեցին ո՛չ կանոնական, ո՛չ իրավական եւ ո՛չ էլ բարոյական տեսանկյունից: Այս քայլը հերթական ոտնձգություն է Հայոց Եկեղեցու ինքնավարության եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կանոնական իրավասությունների նկատմամբ: Հարկ է, որ պաշտոնական փաստաթղթից՝ ՀՀ վարչապետի որոշումից վերացվի նշյալ կեղծ տեղեկությունը»:

ԱՌԱՋԱԴՐԵԼ Է

Տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նիստը: Նիստի ընթացքում քննարկել են այսօր մեկնարկող քառօրյա նիստերի օրակարգային հարցերը եւ որոշում կայացրել ԱԺ պետական եւ իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում առաջադրել Արուսյակ Ջուլհակյանի թեկնածությունը:

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Արշակ սրբազանի գործով այսօր հրավիրված է 1-ին դատական նիստը, հայտնում է փաստաբան Արսեն Բաբայանը. «Ապրիլի 14-ին դատարանի Արմավիր նստավայրում ժամը 15:00-ին հրավիրված է Արշակ սրբազանի քրեա-քաղաքական գործով դատական նիստ:

Հիշեցնեմ, որ նախորդ անգամ դատավորն ինքնաբացարկ հայտնեց, որի արդյունքում գործը հանձնվեց այլ դատավորի: Նոր դատավորն է Արթուր Ադամյանը:

Հիշեցնեմ նաեւ, որ այս քաղաքական հետապնդման հետեւանքով Սրբազանը շուրջ 3 ամիս եղել է բանտարկված»:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Փաշինյանի եւ 18-ամյա Դավիթի՝ Ծաղկազարդի միջադեպի գործով ազատված քննչականի պետի պաշտոնում նոր նշանակում է կատարվել:

Դավիթ Սարոյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնի պետ:

ԸՆԴՈՒՆԵԼ Է

ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանն ապրիլի 13-ին ընդունել է Լիտվայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Աուդրա Պլեպիտեին: ԱԺ փոխնախագահն արժեւորել է Հայաստան-Լիտվա համագործակցությունը, այդ թվում՝ միջխորհրդարանական հարաբերությունների շրջանակում: Անդրադարձ է եղել տարածաշրջանային խնդիրներին, անվտանգային իրավիճակին: Ռուբեն Ռուբինյանն այս համատեքստում խոսել է Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացի մասին: Քննարկվել են նաեւ Հայաստան-ԵՄ հարաբերությունների սերտացման հեռանկարները:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՉԻ ԱՋԱԿՑԻ ՇՐՋԱՓԱԿՄԱՆԸ

Մեծ Բրիտանիան չի միանա Հորմուզի նեղուցը շրջափակելու ԱՄՆ ռազմական առաքելությանը:

«Մենք չենք աջակցում շրջափակմանը», - BBC-ին ասել է Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը:

«Իմ կարծիքով, կենսականորեն կարեւոր է, որ նեղուցը բաց լինի, այլ ոչ թե փակ: Սա հեռավոր հարց չէ: Ամեն անգամ, երբ նեղուցը փակվում է կամ ազատ նավարկությունը խաթարվում է, դա նշանակում է, որ գազն ու նավթը շուկաներ չեն հասնում, եւ գները բարձրանում են», - ասել է Սթարմերը՝ նշելով, որ դա անմիջականորեն ազդում է Մեծ Բրիտանիայի սպառողների վրա:

«Մենք պատերազմի մեջ չենք ներքաշվի: Մեծ Բրիտանիան պատերազմի մեջ չի ներքաշվի: Դա մեր ազգային շահերից չի բխում, քանի որ ես չեմ գործելու, եթե չկա հստակ, իրավական հիմք եւ լավ մտածված ծրագիր», - հավելել է Մեծ Բրիտանիայի վարչապետը:

Ի ՇԱՀ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ

Հորմուզի նեղուցում ազատ նավարկությունը բոլոր երկրների շահերից է բխում, հայտարարել է Չինաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Գո Ցզյակունը՝ մեկնաբանելով ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ տարածաշրջանում նավագնացությունը սահմանափակելու հայտարարությունը:

«Հորմուզի նեղուցը կենսական նշանակություն ունեցող միջազգային առեւտրային երթուղի է ապրանքների եւ էներգիայի լոգիստիկայի համար: Այնտեղ անվտանգության, կայունության եւ անարգել նավարկության պահպանումը բխում է միջազգային հանրության շահերից», - ընդգծել է նա:

Դիվանագետը կոչ է արել կողմերին զսպվածություն ցուցաբերել եւ վերահաստատել է Պեկինի պատրաստակամությունը «շարունակել դրական եւ կառուցողական դեր խաղալ» ճգնաժամի լուծման գործում:

ՉՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ՄԵՂՔՈՎ

Իսլամաբադում ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ փոխըմբռնման հուշագիրը չի ստորագրվել ամերիկյան գործողությունների պատճառով, հայտարարել է Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին:

«Երբ Իսլամաբադի հուշագիրը շատ մոտ էր, մենք հանդիպեցինք մաքսիմալիզմի, տերմինների անընդհատ փոփոխությունների եւ մեր ամերիկացի գործընկերների կոշտության», - գրել է Արաղչին X-ում:

Արտաքին գործերի նախարարի խոսքով՝ Իրանը բարի կամքով է բանակցություններ վարել ԱՄՆ-ի հետ եւ Իսլամաբադ է ուղարկել «վերջին 47 տարիների ընթացքում ամենաբարձր մակարդակի ներկայացուցիչներին»:

ԻՐԱՆ-ԱՄՆ

ԻՆՉՈ՞Ւ ՉԱԽՈՂՎԵՑԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ խաղաղ բանակցությունները, որոնք անցկացվել էին Իսլամաբադում, չեն ավարտվել համաձայնությամբ, թեեւ կողմերը որոշ առաջընթաց են արձանագրել: Սա երկու երկրների միջեւ ամենաբարձր մակարդակի հանդիպումն էր 1979 թվականի Իրանի հեղափոխությունից հետո եւ տեւել է մեկ ամբողջական գիշեր:

Բանակցությունները տեղի են ունեցել Իսլամաբադում Պակիստանի միջնորդությամբ:

ԱՄՆ-ի կողմը ներկայացրել է լայնածավալ առաջարկ՝ պատժամիջոցների չեղարկում, Իրանի միջազգային մեկուսացման ավարտ եւ համագործակցության հնարավորություն: Սակայն Վաշինգտոնը պահանջել է, որ Իրանը ամբողջությամբ հրաժարվի իր միջուկային ծրագրից, ինչը դարձել է հիմնական խոչընդոտը: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Իրանը չի կարող ունենալ միջուկային զենք, եւ այդ հարցում փոխզիջում չի լինելու:

Իրանը, իր հերթին, հրաժարվել է ընդունել ամերիկյան պահանջները՝ դրանք համարելով իր ազգային անվտանգության եւ պետական հեղինակության հարց: Թեհրանը նաեւ ընդգծել է, որ նախկին ռազմական հարվածները բանակցությունների ընթացքում խաթարել են վստահությունը եւ ստիպել են կասկածել ԱՄՆ-ի երաշխիքներին: Իրանը կարեւորել է նաեւ իր ռազմավարական դիրքը Հորմուզի նեղուցում՝ դիտելով այն որպես կարեւոր լծակ միջազգային հարաբերություններում:

Բանակցությունների ձախողման հիմնական պատճառները եղել են փոխադարձ անվստահությունը, միջուկային ծրագրի շուրջ խոր հակասությունները եւ այն, որ կողմերից ոչ մեկը պատրաստ չի եղել զիջումների, որոնք կարող էին ընկալվել որպես պարտություն: ԱՄՆ-ի ներկայացուցիչները նշել են, որ Իրանը չի ընդունել մի շարք «կարմիր գծեր», այդ թվում՝ ուրանի հարստացման դադարեցումը եւ միջուկային ենթակառուցվածքների ապամոնտաժումը:

Բանակցությունները անցկացվել են Սերենա հյուրանոցում: Պակիստանի զինված ուժերի ղեկավար Ասիմ Մունիրը կարեւոր դեր է ունեցել միջնորդական գործընթացում, իսկ ԱՄՆ-ի կողմից բանակցություններին մասնակցել է նաեւ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը:

Չնայած համաձայնության բացակայությանը, կողմերը չեն հայտարարել բանակցությունների ավարտի մասին, եւ միջնորդ Պակիստանը շարունակում է կապ պահպանել երկու կողմերի միջեւ: Փորձագետների գնահատմամբ՝ թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Իրանը դեռեւս ունեն հետաքրքրություն գործընթացը շարունակելու հարցում, քանի որ նոր հակամարտության ռիսկը չափազանց բարձր է:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ԵՆ

Հուսիթները խոստացել են սաստկացնել ռազմական գործողությունները Վաշինգտոնի եւ Թել Ավիվի դեմ, եթե նրանք վերսկսեն հարձակումները Թեհրանի վրա:

«Ամերիկայի եւ թշնամական Իսրայելի կողմից Իրանի եւ Դիմադրության առանցքի դեմ նոր ագրեսիայի դեպքում Եմենի դիրքորոշումը վճռական է՝ ակտիվորեն մասնակցել եւ սաստկացնել ռազմական գործողությունները», - «Սաբա» լրատվական գործակալությունը մեջբերում է շիական շարժման արտաքին գործերի նախարարության հայտարարությունը:

Հուսիթները ընդգծել են, որ ամերիկյան ղեկավարության խոսքերը հակամարտությունը նոր մակարդակի բարձրացնելու մասին իրենք համարում են գործողություններ ձեռնարկելու խթան:

ԹՐԱՄՓԻ ՀԱՄԱՐ ՄԻԵՎՆՈՒՅՆ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ իր համար միեւնույն է՝ Իրանը կվերադառնա Վաշինգտոնի հետ բանակցություններին, թե ոչ:

«Ինձ համար միեւնույն է՝նրանք կվերադառնան բանակցություններին, թե ոչ: Եթե նրանք չվերադառնան, ես համաձայն եմ դրա հետ», - լրագրողներին ասել է ամերիկացի առաջնորդը՝ պատասխանելով այն հարցին, թե որքան ժամանակ կսպասի Իրանին բանակցությունների սեղանի շուրջ վերադառնալուն:

Թրամփը պնդում է, որ Վաշինգտոնը «շատ բարեկամական է եղել», քանի որ ԱՄՆ-ն «շատ կամուրջներ չի քանդել՝ միայն մեկը»:

Շաբաթ օրը Իրանը եւ Միացյալ Նահանգները բանակցություններ սկսեցին Իսլամաբադում: Կիրակի առավոտյան ԱՄՆ պատվիրակության ղեկավար, փոխնախագահ Ջեյ Դի Վենսը հայտարարեց, որ Իրանը եւ ԱՄՆ-ն չեն կարողացել համաձայնության գալ երկարատեւ բանակցությունների ընթացքում:

Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Բաղային պարզաբանել է, որ մի շարք հարցերի շուրջ փոխըմբռնման են հասել, սակայն երկու կամ երեք հիմնական կետերի շուրջ նրանց դիրքորոշումները մնացել են հեռու:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ ՉԵՆ ԵՂԵԼ

Ավստրալիայի վարչապետ Էնթոնի Ալբանեզը հայտարարել է, որ Կանբերրան ԱՄՆ-ից որեւէ օգնության խնդրանք չի ստացել Մերձավոր Արեւելքի հակամարտության հարցում, եւ ստացված միակ խնդրանքը Պարսից ծոցի երկրների աջակցությունն էր:

«Մենք ԱՄՆ-ից որեւէ խնդրանք չենք ստացել: Նրանք Իրանում գործողության մեկնարկի մասին հայտարարությունն արել են գիշերը եւ միակողմանիորեն: Մեզ չեն դիմել մասնակցելու համար», - ընդգծել է Ալբանեզեն 9News հեռուստաալիքի եթերում:

Վարչապետը նաեւ նշել է, որ Կանբերրան ստացել է Պարսից ծոցի երկրների, «առաջին հերթին՝ ԱՄԷ-ի» աջակցության միակ խնդրանքը:

«Դրա հետ կապված՝ ուղարկվել է Wedgetail օդային վաղ նախազգուշացման ինքնաթիռ, որը շարունակում է կարեւոր առաքելություններ կատարել տարածաշրջանում՝ պաշտպանություն ապահովելով հակամարտությանը չմասնակցող երկրներին:

Մերձավոր Արեւելքում դրա տեղակայումը երկարաձգվել է եւս չորս շաբաթով (մինչեւ 2026 թվականի մայիսի 7-ը)», - ասել է նա:

ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ՍԿՍԵԼ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ

Ապրիլի 13-ին ԱՄՆ զինված ուժերը կսկսեն Իրանի ծովային շրջափակումը՝ արգելափակելով բոլոր նավերը, որոնք ուղեւորվում են Իսլամական Հանրապետության նավահանգիստներ կամ փորձում են լքել նրա ափերը, ասվում է ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության (CENTCOM) հայտարարության մեջ:

«CENTCOM ուժերը ապրիլի 13-ին, ժամը 10:00-ին (Մոսկվայի ժամանակով ժամը 17:00-ին), կսկսեն Իրանի նավահանգիստներ մտնող եւ դուրս եկող բոլոր ծովային երթեւեկության շրջափակում՝ համաձայն նախագահի հրամանագրի:

Շրջափակումը օբյեկտիվորեն կվերաբերի բոլոր երկրների բոլոր նավերին, որոնք մտնում կամ դուրս են գալիս Իրանի նավահանգիստներից կամ ափամերձ տարածքներից», - ասվում է հրամանատարության հայտարարության մեջ:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՏՂԱՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆ

Ապրիլի 13-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 09:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արաբկիրի բաժնում հերթական օպերատիվ տեղեկություններն են ստացվել, որ Վաղարշյան-Քոչար փողոցների խաչմերուկում դի կա:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն ժամանել են ոստիկանության Արաբկիրի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Ռուբեն Ներսիսյանի գլխավորությամբ:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝ գնդի հրամանատարի տեղակալ Արսեն Ստեփանյանի, գումարտակի հրամանատար Արմեն Գասպարյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Դավիթ Հովհաննիսյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են պարեկները: Տեղում պարզվել է, որ ստացված օպերատիվ տեղեկությունը հավաստի է:

Նշված վայրում հայտնաբերվել է Արագածոտնի մարզի բնակիչ 36-ամյա Էդուարդ Հ.-ի մարմինը: Դեպքի մասին ոստիկանության Արաբկիրի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Ազատ Եղիազարյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ: Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Քննիչի որոշմամբ նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն: Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

ԿԱՆԽՎԵՑ

Ապրիլի 4-ին ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոնից Համայնքային ոստիկանության Սպիտակի բաժին ահազանգ է ստացվել, որ Սպիտակ-Երեւան ճանապարհի աջակողմյան հատվածում կազմակերպվում է շնամարտ:

Քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածում, որը վերնագրված է՝ Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը, ի թիվս այլ ձեւակերպումների, որպես դաժան վերաբերմունքի դրսեւորում նշված է նաեւ կենդանիների մարտի կազմակերպումը կամ իրականացումը: Չնայած այս պարզ ձեւակերպմանը՝ ապրիլի 4-ի ահազանգը բոլորովին էլ եզակի դեպք չէր:

Ի դեպ, շնամարտ կազմակերպողներն իրենց արարքն արդարացնելու համար այդ մարտերը կոչում են թեստավորում:

«Դինգո թիմ» ՀԿ նախագահ Օվսաննա Հովսեփյանի խոսքով՝ կենդանին վնասվում է թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես, եւ երբ կազմակերպիչներն ասում են, որ սրանք մարտեր չեն, այլ թեստավորում՝ իրականության հետ ոչ մի կապ չունի:

2025 թվականին արձանագրվել է կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի 31 դեպք, ու սրանց մեջ կան նաեւ շնամարտի կազմակերպման դեպքեր: Նույն ժամանակահատվածում բացահայտվել է 14 դեպք: Իսկ այս տարի, մինչեւ ապրիլի 7-ը, երբ պատրաստվում էր տեսանյութը, համայնքային ոստիկաններն արդեն իսկ արձագանքել են կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի մասին 32 ահազանգի: Սա նշանակում է, որ աճել է ոչ թե դաժան վերաբերմունքի, այլ այդ մասին ահազանգող մտահոգ քաղաքացիների թիվը: Նաեւ ակտիվացել է խնդրով զբաղվող հասարակական կազմակերպությունների եւ իրավապահ մարմինների համագործակցությունը:

«Այսօր ՀՀ-ում գործում են մի շարք ՀԿ-ներ, որոնք զբաղվում են տնային կենդանիների պաշտպանությամբ: Եվ գրեթե բոլոր ՀԿ-ների կանոնադրություններում կա առանձին կետ, որ կենդանիների նկատմամբ դաժան դեպքեր հայտնաբերելու դեպքում, օրենքով սահմանված կարգով, պետք է տեղեկացնեն պատկան մարմիններին եւ միջոցներ ձեռնարկեն նմանատիպ դեպքերը բացառելու եւ կանխելու նպատակով»,-ասում է «Ադել» տնային կենդանիների պաշտպանության ՀԿ նախագահ Մարթա Մելիքսեթյանը:

Վերադառնանք ապրիլի 4-ի դեպքին, որն էականորեն տարբերվում էր նմանատիպ այլ դեպքերից, քանի որ քրեական վարույթ նախաձեռնվեց ոչ միայն 307-րդ, այլեւ Քրեական օրենսգրքի երկու այլ հոդվածների հատկանիշներով:

«Ադել» տնային կենդանիների պաշտպանության ՀԿ նախագահ Մարթա Մելիքսեթյանը մանրամասնում է. ««Ադել» տնային կենդանիների ՀԿ-ն, ապրիլի 2-ին ստանալով տեղեկություն, որ Լոռու մարզում, Սպիտակ քաղաքի հարակից տարածքում պետք է իրականացվի շնամարտ՝ տարբեր ՀԿ-ներից ստեղծել է աշխատանքային խումբ եւ մեկնել է Սպիտակ»:

Հասարակական կազմակերպությունների անդամները տեղ հասնելով՝ համոզվեցին, որ իսկապես կազմակերպվել է շնամարտ:

Հասարակական կազմակերպությունների կանոնադրության պահանջների համաձայն՝ կենդանասեր-կենդանապաշտպաններն ահազանգեցին 112 ծառայություն:

«Դոգ-մա» ՀԿ համանախագահ Գոհար Տեր-Անտոնյանը նշում է. «Ոստիկանությանն ուզում եմ շնորհակալություն հայտնել, քանի որ ահազանգից 4 րոպե հետո եղել է տեղում: Եվ բացի նրանից, որ միանգամից դադարեցվել է շնամարտը, Ոստիկանության պրոֆեսիոնալ աշխատանքի շնորհիվ շնամարտ կազմակերպողները չկարողացան փախուստի դիմել»: «Ոստիկանության ծառայողները, հասնելով նշված վայր, ձերբակալել են շնամարտի կազմակերպիչներից երեքին եւ տեղափոխել Համայնքային ոստիկանության Սպիտակի բաժին տրանսպորտային միջոցների եւ ութ շների հետ միասին», - ասում է ՀՈԳՎ ավագ տեսուչ Դավիթ Դիպլոշյանը:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Սպիտակի քննչական բաժին, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ ոչ միայն կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի, այլեւ խուլիգանության ու ֆիզիկական ներգործության հատկանիշներով: Նախաքննությունը շարունակվում է:

Հիշեցնենք, որ Քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածի համաձայն՝ կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունք է նաեւ կենդանիների մարտի կազմակերպումը կամ իրականացումը: Ուստի հորդորում ենք մեր քաղաքացիներին՝ չխախտել օրենքի պահանջը եւ դրանով իսկ խուսափել քրեական պատասխանատվությունից:

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆԱՐԿԵԼ Է ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանհայ քաղաքում երեկ հանդիպել է Դատախազների միջազգային ասոցիացիայի գլխավոր քարտուղար Ռոյլ Դոնային:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Շանհայում մասնակցում է Դատախազների միջազգային ասոցիացիայի (ԴՄԱ) Գործադիր կոմիտեի 61-րդ նիստին՝ որպես ԴՄԱ գործադիր կոմիտեի անդամ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք հիմնականում վերաբերել են Ասոցիացիայի շրջանակում համագործակցության հեռանկարներին:

ԹՄՐԱՆՅՈՒԹ ԻՐԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔ

Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ծառայողներն օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ մի տղամարդ ապօրինի ձեռք բերում, պահում եւ իրացնում է տարբեր տեսակի թմրամիջոցներ:

Ապրիլի 6-ին 39-ամյա տղամարդը Հալաբյան փողոցում ձերբակալվեց ու տեղափոխվեց Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեց դեղնականաչավուն զանգվածով ութ փաթեթ:

Տղամարդը հայտնեց, որ մարիխուանան ձեռք է բերել համացանցի միջոցով՝ իրացնելու նպատակով:

Քննչական գործողության ընթացքում հայտնաբերվեց արդեն տեղադրված եւս երկու փաթեթ:

Տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Հանգամանքները պարզվում են:

ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՈՒՄ

Ապրիլի 7-ին Համայնքային ոստիկանության Տավուշի բաժնում ստացվել է օպերատիվ տեղեկություն, որ Նավուր գյուղին հարակից անտառածածկ տարածքում ապօրինի ծառահատում է կատարվում:

Ստուգման ժամանակ նշված վայրում հայտնաբերվել է հատված մեկ հաճարենի եւ արմատախիլ եղած մեկ բոխի: Նավուրի բնակիչ 39-ամյա տղամարդը որեւէ փաստաթուղթ չի ներկայացրել: Նա հայտնել է, որ բենզասղոցով ինքն է հատել հաճարենին եւ վառելափայտը պատրաստել՝ իր տուն տեղափոխելու նպատակով:

Ըստ նախնական տվյալների՝ բնությանը եւ պետությանը պատճառվել է 290 հազար դրամի վնաս:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են:

● *Ըստ վիճակագրության՝ ապրիլի 9-ից 10-ը գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 1 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԴՐԱՄԱՀԱՎԱՔ ԵՆ ԱՆՈՒՄ

Ապրիլի 6-ի երեկոյան Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Բաղանիս գյուղի ավտոգազալցավորման ճնշման կայանում (ԱԳԼՃԿ) լիցքավորվող ավտոմեքենայի գազի բալոնը պայթել է, որի հետեւանքով կայանի գազալիցքավորողը վնասվածքներով տեղափոխվել է Նոյեմբերյանի բժշկական կենտրոն: Նոյեմբերյանի ԲԿ-ից տեղեկացա, որ պայթյունից վիրավորված Կողբ գյուղի բնակիչը բուժման համար տեղափոխվել է Երեւան: Դեպքից 3 օր անց՝ապրիլի 9-ին, Կողբ բնակավայրի վարչական ղեկավար Արարատ Թամրազյանը Ֆեյսբուքում կոչ է արել. «Հարգելի հայրենակիցներ, հայցում ենք բոլորիդ աջակցությունը Կողբ գյուղի բնակիչ Սերյոժա Հովիկի Հարությունյանի հրատապ եւ անհետաձգելի բուժումը կազմակերպելու նպատակով: Սերյոժա Հարությունյանը 06.04.2026 թվականին գազալցակայանում տեղի ունեցած վթարի հետեւանքով ստացել է ծանր մարմնական վնասվածքներ եւ այժմ գտնվում է Էրեբունի բժշկական կենտրոնի վերակենդանացման ինտենսիվ թերապիայի բաժանմունքում: Սերյոժայի կյանքը փրկելու համար ձեր նյութական աջակցությունը կարող եք փոխանցել հետեւյալ հաշվեհամարներով, ինչպես նաեւ կարող եք մոտենալ Կողբի վարչական նստավայր»: Հայաստանում հրատապ խնդիր է գազով աշխատող ավտոմեքենաներում տեղադրված գազի բալոնների անվտանգության պարտադիր ստուգումը համապատասխան կազմակերպությունների կողմից:

ԴԻԼԻՋԱՆԸ ՄՐՑՈՒՄ Է

Տուրիստական Դիլիջան քաղաքն առաջադրվել է «World Travel Awards» մրցանակաբաշխության մասնակից՝ «Եվրոպայի առաջատար զարգացող ուղղություն-2026» անվանակարգում: Այդ անվանակարգում առաջադրված եվրոպական 13 քաղաք-թեկնածու կա, որոնց օգտին «World Travel Awards»-ի ինտերնետային կայքում քվեարկություն է ընթանում: Դիլիջանում հասարակական զուգարան չկա, որ տուրիստները կօտվեն, սպանդանոց չի գործում, Դիլիջանի հյուրանոցներում, սննդի օբյեկտներում իրացվող միսը սպանդանոցային ծագում չունի, կարող է վտանգ ներկայացնել օգտվողների համար: Դիլիջան քաղաքի տարբեր հատվածներում աղբի կույտեր են թափված, կենտրոնական մասի փողոցներում մեծ ջրափոսեր են: Տուրիստական Դիլիջան քաղաքում հաճախ տեւական ժամանակով անջատում են խմելու ջրի մատակարարումը, ինչը խնդիրներ է ստեղծում քաղաքի բնակիչների եւ զբոսաշրջիկների համար: Այդպիսի հիմնախնդիրներով Դիլիջանը ո՞նց կարող է եվրոպական զարգացած քաղաքների հետ մրցակցել եւ այդ մրցակցությունում հաղթող ճանաչվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՐՏՎԵՑ

Ո՞Վ Է ՎԻԿՏՈՐ ՕՐԲԱՆԸ

Հունգարիայում տեղի ունեցած ընտրություններում պարտված վարչապետ Վիկտոր Օրբանը տարիներ շարունակ համարվել է հակասական եւ սկանդալային քաղաքական գործիչ՝ նաեւ Հայաստանի համար ցավոտ որոշումների հեղինակ:

ArmLur.am-ը ուսումնասիրեց, թե ով է Օրբանը եւ ինչ դեր է նա ունեցել Հայաստանի հետ կապված ամենախնդրահարույց իրադարձություններից մեկում:

Հունգարիայի ընդդիմությունը պնդում է, որ վարչապետ Վիկտոր Օրբանը առանցքային դեր է խաղացել Ռամիլ Սաֆարովի էքստրադիցիայի հետ կապված ադրբեջանական իշխանությունների հետ կնքված գործարքում:

Վիկտոր Օրբանը ծնվել է 1963 թվականին Հունգարիայի Սեկեշֆեխերվար քաղաքում: 26 տարեկանում դարձել է «Երիտասարդ դեմոկրատների միության» («Ֆիդես») կուսակցության հիմնադիր-անդամ:

Նրա անունը լայնորեն հայտնի դարձավ 1989 թվականի հունիսի 16-ին, երբ հանրահավաքի ժամանակ պահանջեց խորհրդային զորքերի դուրսբերումը: Մեկ տարի անց ընտրվեց խորհրդարան: Առաջին անգամ վարչապետ դարձավ 1998 թվականին՝ աչքի ընկնելով սկանդալային նախաձեռնություններով, այդ թվում՝ այլ երկրներից համերկրացիներին Հունգարիայի անձնագրերի տրամադրման պարզեցված օրենքով, ինչը լարվածություն առաջացրեց Սլովակիայի եւ Ռումինիայի հետ:

2002 թվականի ընտրություններում պարտվելուց հետո 8 տարի ընդդիմությունում անցկացրեց, սակայն 2010-ին վերադարձավ իշխանության եւ սկսեց մի շարք աղմկահարույց փոփոխություններ իրականացնել: Նրա կառավարման տարիներին, ըստ քննադատների, սահմանափակվել է խոսքի ազատությունը, խաթարվել է դատական համակարգը, իսկ պետական համակարգում նշանակվել էին մեծամասամբ իր մերձավորները:

Ֆրանսիական L'Express-ը գրել էր, որ Օրբանը «իշխում է կատարյալ տիրակալի պես» եւ նրա օրոք «Հունգարիան հայտնվել է բռնատիրության եւ սնանկության եզրին»:

Օրբանի կարեւոր քայլերից էր նոր Սահմանադրության ընդունումը, որի որոշ դրույթներ հակասում էին եվրոպական արժեքներին: Այդ պատճառով նա խիստ քննադատության արժանացավ միջազգային տարբեր կառույցների եւ երկրների ղեկավարների կողմից, սակայն փաստաթուղթը ուժի մեջ մտավ 2012 թվականի հունվարի 1-ին:

Ենթադրվում է նաեւ, որ հենց Օրբանն է եղել Ադրբեջանի կողմից 2-3 միլիարդ դոլարի հունգարական պետական պարտատոմսերի գնման «ճարտարապետը», ինչի համար ընդդիմությունը նրան մեղադրում էր երկրի պատիվը «վաճառելու» մեջ:

Օրբանը նաեւ այն վարչապետն է, ով 2012 թվականի օգոստոսի 31-ին Ադրբեջանին արտահանձնեց Ռամիլ Սաֆարովին, որը Հունգարիայում ցմահ ազատազրկման էր դատապարտվել հայ սպա Գուրգեն Մարգարյանի սպանության համար: Ադրբեջանում նա անմիջապես ներում ստացավ Իլհամ Ալիեւի կողմից եւ դարձավ Ադրբեջանի ազգային հերոս:

Այդ որոշումից հետո Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ Հունգարիան եւ Ադրբեջանը գործարքի մեջ են մտել՝ընդգծելով, որ այդ քայլը կարող է խրախուսել նման հանցագործությունները: Նույն օրը Հայաստանը կասեցրեց դիվանագիտական հարաբերությունները Հունգարիայի հետ:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը եւս հայտարարել էր, որ Հունգարիայի կառավարությունը չէր կարող անտեղյակ լինել Սաֆարովի նկատմամբ Ադրբեջանում հնարավոր վերաբերմունքից եւ, այդպիսով, կրում է բարոյական պատասխանատվություն:

Հատկանշական է, որ միայն 2024 թվականին Հայաստանի եւ Հունգարիայի միջեւ հարաբերությունները վերականգնվեցին, եւ նշանակվեցին դեսպաններ:

Այսպիսով, երկար տարիներ իշխանության մնացած եւ Հայաստանի համար հիշվող բացասական որոշումներով աչքի ընկած Վիկտոր Օրբանը այժմ պարտություն է կրել՝ փակելով իր քաղաքական երկարատեւ 16 ամյա կառավարման փուլը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հունգարիայում կայացած խորհրդարանական ընտրությունները ավարտվել են իշխանափոխությամբ. երկարամյա վարչապետ Վիկտոր Օրբանը ընդունել է իր պարտությունը՝ ավարտելով 16 տարվա իշխանությունը:

Օրբանը շնորհավորել է ընդդիմադիր «Տիսա» կուսակցության առաջնորդ Պետեր Մաջյարին՝ընտրությունների արդյունքը բնութագրելով որպես «ցավոտ, բայց հստակ»:

Նախնական տվյալներով՝ Մաջյարի ղեկավարած «Տիսա» կուսակցությունը ստացել է խորհրդարանի 199 մանդատից շուրջ 138-ը՝ապահովելով սահմանադրական մեծամասնություն: Սա հնարավորություն կտա նոր իշխանություններին փոփոխություններ իրականացնել, այդ թվում՝ վերանայել Օրբանի կառավարման տարիներին ընդունված վիճահարույց որոշումները:

Օրբանի «Ֆիդես» կուսակցությունը, որը նախկինում ուներ 135 մանդատ, այժմ կարող է ունենալ ընդամենը մոտ 55:

Եվրոպայի արձագանքը

Եվրոպական առաջնորդները լայնորեն ողջունել են ընտրությունների արդյունքները: Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը հայտարարել է. «Հունգարիան ընտրեց Եվրոպան»:

Եվրոպական խորհրդարանի նախագահ Ռոբերտա Մեցոլան ընդգծել է, որ «Հունգարիայի տեղը Եվրոպայի սրտում է»:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը նշել է, որ սա հաղթանակ է, որը ցույց է տալիս հունգար ժողովրդի հավատարմությունը եվրոպական արժեքներին:

Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը եւ Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկը նույնպես շնորհավորել են Մաջյարին՝ ընդգծելով միասնական Եվրոպայի կարեւորությունը:

ԱՄՆ արձագանքը

ԱՄՆ նախկին նախագահ Բարաք Օբաման ընտրությունների արդյունքը գնահատել է որպես «ժողովրդավարության հաղթանակ ամբողջ աշխարհում»՝ ընդգծելով հունգարացիների հաստատակամությունն ու օրենքի գերակայության կարեւորությունը:

Միեւնույն ժամանակ, այս արդյունքը դիտվում է որպես հարված ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի համար, ով նախընտրական շրջանում աջակցել էր Վիկտոր Օրբանին:

Քարոզարշավ եւ հիմնական խոստումներ

Պետեր Մաջյարը իր քարոզարշավում կենտրոնացել էր կոռուպցիայի դեմ պայքարի, տնտեսության զարգացման եւ առողջապահական համակարգի բարելավման վրա: Նա խոստացել է վերականգնել Հունգարիայի հարաբերությունները Եվրոպական միության հետ եւ ամրապնդել կապերը ՆԱՏՕ-ի հետ:

Մաջյարը հայտարարել է, որ իր առաջին այցը վարչապետ դառնալուց հետո կլինի Լեհաստան, այնուհետեւ՝Վիեննա եւ Բրյուսել:

Տոնական մթնոլորտ Բուդապեշտում

Ընտրությունների գիշերը Բուդապեշտում տոնական էր. հարյուրավոր մարդիկ հավաքվել էին Դանուբի ափին՝նշելու իշխանափոխությունը: Շատ երիտասարդների համար սա անսովոր պահ էր, քանի որ նրանք մեծացել էին Օրբանի իշխանության տարիներին:

Մաջյարը դիմելով իր կողմնակիցներին՝ հայտարարել է. «Մենք միասին ազատագրեցինք Հունգարիան»:

Նրա հաղթանակը շատերի կողմից դիտվում է որպես նոր էջ երկրի պատմության մեջ եւ շրջադարձ դեպի ավելի եվրոպամետ քաղաքականություն:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Ապրիլի 9-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է կաշառք տալու եւ բնակարանային գողության 1-ական դեպք:*

ԼՈՒՐԵՐ

1 ՄԼՐԴ ԴՈԼԱՐԻ ԱՃ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

«Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Նարեկ Կարապետյանը գրում է. «Ըստ ամերիկյան Forbes պարբերականի 2026 թվականի տվյալների՝ Սամվել Կարապետյանի կարողությունը 1 տարվա ընթացքում աճել է 900 մլն դոլլարով կազմելով 4.1 մլրդ ԱՄՆ դոլլար: Շատ՞ գիտեք մարդ ով կալանքի տակ հաջողել է համարյա 1 մլրդ դոլլարով կարողություն ավելացնել: Պատկերացրեք որտեղ կբարձրացնի երկրում ապրելու մակարդակը երբ լինի Հայաստանի վարչապետը: Փոփոխության ժամանակն է»: *(Գ)*

ՎԿԱՅՈՒՄ Է

Քաղաքական վերլուծաբան Տիգրան Դումիկյանը գրում է. «Երեւանի «Ազատության» հրապարակում ապրիլի 11-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախաձեռնած բազմամարդ հանրահավաքը առաջին հերթին ազդարարեց, որ Հայաստանում քաղաքական իշխանության փոփոխության հանրային պահանջը շոշափելիորեն հասունացել է: Այդ փոփոխությունն, ըստ էության, պետք է լինի ազգային բարերար եւ այլեւս Հայաստանում ամենամեծ ընդդիմադիր շարժման ղեկավար Սամվել Կարապետյանի առաջնորդությամբ, քանի որ հենց նրա առաջ քաշած օրակարգի շուրջ էլ սկսում է ձեւավորվել ոչ միայն հասարակական, այլեւ քաղաքական լայն կոնսոլիդացիա:

Սովորաբար նման մասշտաբի միջոցառումները հնարավոր է լինում կազմակերպել նախընտրական քարոզարշավի ամենաակտիվ փուլում, երբ հասարակությունը առավելագույնս մոբիլիզացված եւ մոտիվացված է: Սակայն համապետական ընտրություններից դեռեւս երկու ամիս առաջ այդ մակարդակի հանրահավաքի եւ երթի կազմակերպումը վկայում է ոչ միայն նորաստեղծ ընդդիմադիր ուժի զգալի հանրային աջակցության, այլեւ այն մասին, թե որքան վճռական են տրամադրված հանրության լայն շերտերը՝ երկրում իրական եւ խորքային փոփոխություններ իրականացնելու հարցում:

Հատկանշական եւ, միաժամանակ, զավեշտալի էր, որ գործող վարչակարգի ներկայացուցիչները նախ տարածեցին հանրահավաքի մասշտաբը խեղաթյուրող կեղծ լուսանկարներ, ապա հանդես եկան արհամարհական ու անպատշաճ գրառումներով: Ի պատասխան՝ սոցիալական ցանցերում քաղաքացիների կոշտ եւ հեգնական արձագանքը մեկ անգամ եւս հիշեցրեց հայկական հայտնի ասացվածքը՝ ստի ոտքը կարճ է լինում:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ մի բան ասելու, հետո սեփական խոսքերից հետ կանգնելու գործելաոճը վաղուց արդեն հանրության շրջանում դարձել է ծաղրի ու զվարճանքի առարկա: Դե, իսկ «Ուրախ ավտոբուսի» տխուր պատմությունները շարունակաբար վկայում են, որ օրվա իշխանությունն ամբողջությամբ սպառել է իր վստահության մանդատը:

Ամեն դեպքում, վերջնական որոշումը կայացվելու է ընտրատեղամասում: Կողմ թե դեմ կարծիք ունեցող ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի հունիսի 7-ին պետք է իր դիրքորոշումը վավերացնի՝ պարտադիր մասնակցելով քվեարկությանը: Հակառակ դեպքում՝ ակտիվ փոքրամասնությունը շարունակելու է իր կամքը թելադրել բոլորին՝ անկախ հանգամանքներից»: *(Գ)*

ԽԱՅՏԱՌԱԿ ՎԻՃԱԿ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՎԵԼ

Ապրիլի 13-ին Երեւանում տեղացած հորդառատ անձրեւի, որոշ վարչական շրջաններում էլ տեղացած ձյան հետեւանքով արտակարգ իրավիճակ ու անհարմարություններ էին ստեղծվել մի քանի վարչական շրջաններում:

Սելավատարների չգործելու պատճառով հերթական անգամ Նոր Նորք վարչական շրջանի Գյուրջյան փողոցում՝ ժողովրդին հայտնի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն տանող ճանապարհահատվածում, ստեղծվել էր հսկայական լճակ, ինչի պատճառով մեծ թվով վարորդներ իրենց ավտոմեքենաներով հայտնվել էին դրա մեջ ու չէին կարողանում տեղաշարժվել:

Ինչպես տեղից հայտնել է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վարորդներին օգնության էին հասել ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական ջոկատի փրկարարները, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկները եւ Երեւանի 103 շտապօգնության բժիշկների հերթապահ խմբերը:

Բժիշկները տեղում մեկ հոգու անհրաժեշտ բուժօգնություն ցուցաբերեցին, ապա տեղափոխեցին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Տարածքում դիտահորերը եւ ջրահեռացման խողովակները չէին աշխատում, ինչի պատճառով էլ որոշ հատվածներում էլ ջրի բարձրությունն անցնում էր 1 մետրը: Փրկարարները մեծ դժվարությամբ մի քանի ավտոմեքենաներ իրենց բեռնատար ավտոմեքենայով կարողացան դուրս բերել, իսկ մի քանիսն էլ դուրս բերելու համար փրկարարները օգտագործեցին հատուկ ջրադիմացկուն հագուստներ: 4 ժամից ավելի պահանջվեց, մինչեւ բոլոր ավտոմեքենաները դուրս բերվեցին: Իսկ այդ ընթացքում պարեկները տեղում ուժեղացված ծառայություն էին կատարում: Այդ ընթացքում ո՛չ Երեւանի քաղաքապետարանից, ո՛չ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից ոչ ոք չկար, որպեսզի իրենք էլ օգնության ձեռք մեկնեին քաղաքացիներին:

ԲԱՆԿԵՐ

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ

Ֆասթ Բանկի հովանավորությամբ Սուրբ Հարության տոնին Երեւանի Շառլ Ազնավուրի հրապարակում տեղի է ունեցել ամենամյա «Zatik Art Fest 2026-ը»: Արվեստի այս յուրահատուկ փառատոնը միավորել է տասնյակ արվեստագետների ու հարյուրավոր այցելուների:

Փառատոնի առանցքում «Live Art» ձեւաչափն էր. 40 նկարիչներ նկարազարդել են խորհրդանշական հավկիթները՝ վերածելով դրանք ինքնատիպ արվեստի գործերի: Փառատոնի օրը պատկերազարդված բացառիկ հեղինակային արտ-օբյեկտները Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից կհանձնվեն տարբեր ոլորտների բարեխիղճ ու օրինակելի քաղաքացիներին եւ գործընկերներին՝ մայրաքաղաքի հանդեպ ցուցաբերած հոգատարության համար: Փառատոնն ուղեկցվել է հոգեւոր եւ ժողովրդական մեղեդիներով: Հրապարակում գործել է նաեւ ցուցահանդես-վաճառք՝ ներկայացնելով հայկական ձեռագործ արվեստի լավագույն նմուշները: Ֆասթ Բանկի աջակցությամբ տեղի ունեցած «Zatik Art Fest»-ը տարիների ընթացքում վերածվել է քաղաքային ամենասպասված փառատոներից մեկը: Ֆասթ Բանկը շարունակաբար մեծ ներդրումներ է կատարում արվեստի եւ մշակույթի ոլորտներում՝ հովանավորելով ամենատարբեր նախագծեր:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հայաստանում մեկնարկել է Leasing Expo 2026-ը, որի հիմնական գործընկերն է լիզինգային շուկայի բացարձակ առաջատար Ակբա Լիզինգը:

Ցուցահանդեսին Ակբա Լիզինգն իր գործընկերների հետ համագործակցությամբ ներկայացնում է հատուկ առաջարկներ՝ ուղղված տնտեսության տարբեր ոլորտներում գործող բիզնեսների զարգացմանը:

«Ակբա Լիզինգը տարեցտարի ընդլայնում է ներդրումները Հայաստանի տնտեսության իրական հատվածում՝ արձանագրելով նոր հաջողություններ: Այսօր մեր կնքած պայմանագրերի հանրագումարը շուրջ 140 միլիարդ դրամ է, եւ մենք կրկին առաջատարն ենք վարկային կազմակերպությունների շրջանում՝ որպես խոշորագույն հարկատու»,- նշել է Ակբա Լիզինգի տնօրենի տեղակալ Սարգիս Սարգսյանը:

«Ակբա Լիզինգն այս տարի եւս Leasing Expo-ի հիմնական գործընկերն է: Մինչեւ ապրիլի 12-ը ներառյալ Ակբա Լիզինգը հատուկ պայմաններ է առաջարկում տնտեսության տարբեր ոլորտներում գործող բիզնեսների համար՝ սկսած գյուղատնտեսական տեխնիկայից մինչեւ արտադրական սարքավորումներ ու էլեկտրամոբիլներ: Առաջարկներին ծանոթանալու համար սիրով կսպասենք Ակբա Լիզինգի տաղավարում»,- նշել է Ակբա Լիզինգի ներկայացուցիչ Աննա Գրիգորյանը:

Leasing Expo 2026-ը կգործի մինչեւ ապրիլի 12-ը ներառյալ՝ Մերիդիան էքսպո կենտրոնում: Ակբա Լիզինգի 100% բաժնետերն Ակբա բանկն է:

Ակբա Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՍՏԱՑԵԼ Է ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Յունիբանկը հաստատել է իր համապատասխանությունը հաճախորդների պաշտպանության միջազգային չափանիշներին: Բանկը ստացել է հաճախորդների պաշտպանության հավաստագիր MFR միջազգային վարկանիշային գործակալությունից:

Հավաստագրումը հաստատում է, որ բանկի հաճախորդների սպասարկումը համապատասխանում է միջազգային չափանիշներին եւ արտացոլում է առաջընթացը լավագույն փորձի ներդրման ուղղությամբ:

Յունիբանկը վարում է հաճախորդակենտրոն քաղաքականություն եւ հետեւողականորեն կիրառում է թափանցիկության, հաճախորդների նկատմամբ արդար վերաբերմունքի եւ պատասխանատու գնագոյացման սկզբունքները:

Այսօր բանկը սպասարկում է Հայաստանի աշխատունակ բնակչության ավելի քան մեկ երրորդին՝ 50 մասնաճյուղերի, 400 պրոմո կետերի եւ թվային լուծումների միջոցով: Բանկն առաջիններից էր Հայաստանում, որ ներդրեց արհեստական բանականության վրա հիմնված վարկային սկորինգ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՌԻՆԳ

ԷՐԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ 5-ՐԴ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Բռնցքամարտի երիտասարդների աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, 60 կգ քաշային Էրիկ Իսրայելյանը 5-րդ հաղթանակն է տարել պրոֆեսիոնալ ռինգում: Այս մասին հայտնում է Հայաստանի պրոֆեսիոնալ բռնցքամարտի խորհուրդը:



Կանադայի Քվեբեկ քաղաքում ապրիլի 9-ին անցկացված բռնցքամարտի երեկոյում Էրիկ Իսրայելյանը մենամարտել է չիլիացի Ֆրանկո Ֆիլգեյրայի (5-2-0) հետ եւ հաղթել 4-րդ ռաունդում նոկաուտով:

Բռնցքամարտի Հայաստանի հավաքականի նախկին անդամը 2025 թվականից է հանդես գալիս պրոֆեսիոնալ բռնցքամարտում եւ ներկայացնում է կանադական պրոմոութերական ընկերություն:

Հայաստանի հավաքականի կազմում պաշտոնական մրցաշարում նա վերջին անգամ մասնակցել է 2023թ. Եվրոպայի մինչեւ 22 տարեկանների առաջնությանը եւ նվաճել բրոնզե մեդալ, որից հետո մասնակցել է 2024թ. մեծահասակների Հայաստանի առաջնությանը:

Պրոֆեսիոնալ բռնցքամարտ տեղափոխվելու մտադրությունների մասին Իսրայելյանը հայտնել էր դեռ 3 տարի առաջ, նաեւ կնքել էր պայմանագիր պրոֆեսիոնալ բռնցքամարտի Eye of the Tiger Management պրոմոութերական ընկերության հետ: Այդ շրջանում բռնցքամարտիկը հայտարարել էր, որ այլեւս չի ցանկանում ներկայացնել Հայաստանը եւ Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիան: Որոշ ժամանակ անց երիտասարդների աշխարհի չեմպիոնը չեղարկեց Eye of the Tiger Management պրոմոութերական ընկերության հետ պայմանագիրը, քանի որ ԿԳՄՍ-ն հանրային քննարկման դրեց Էրիկ Իսրայելյանին տարկետումից զրկելու նախագիծը եւ բռնցքամարտիկը ստիպված եղավ շարունակել մրցելությունները մինչեւ 22 տարեկանների հավաքականի կազմում:

Էրիկ Իսրայելյանը պրոֆեսիոնալ ռինգում անցկացրել է 5 մենամարտ եւ տարել նույնքան հաղթանակ, որից երեքը նոկաուտով: Նորամուտը նշել է 2025 թ. հոկտեմբերի 4-ին հունգարացի Ռիչարդ Բերնաթի նկատմամբ հաղթանակով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ապրիլի 15-ն աշխարհում նշվում է որպես Արվեստի համաշխարհային օր: Նախաձեռնության նպատակը հանրային կյանքում արվեստի դերի կարեւորումն ու ստեղծագործականության խթանումն է՝ միավորելով արվեստի տարբեր ուղղություններն ու ստեղծագործական գործընթացները: ԿԳՄՍ նախարարությունը Արվեստի օրվա շրջանակում Երեւանում, Արտաշատում եւ Վանաձորում նախաձեռնել է բազմաժանր մշակութային միջոցառումներ. տեղի կունենան համերգային ծրագրեր, թատերական եւ մնջախաղային ներկայացումներ, ցուցահանդեսներ, բացօթյա արվեստի ակցիաներ, ինտերակտիվ նախագծեր եւ ստեղծագործական այլ նախաձեռնություններ: Ծրագրին կմասնակցեն մի շարք մշակութային եւ կրթական հաստատություններ:

Երեւան

Ժամը՝ 12:00-14:00- «Պահի տպավորությունը՝ պատկեր» մշակութային նախագիծ (Նկարիչների միությանը հարող տարածք)

Ժամը՝ 12:00-15:00 - «Արվեստը քաղաքում» (կերպարվեստ, երաժշտություն, պար) (Կասկադ համալիր)

Ժամը՝ 13:00 - Մշակութային պերֆորմանս («Հանրապետության հրապարակ» մետրոյի կայարան)

Ժամը՝ 14:30-17:00 - Միմերի միջոցով պատկերների եւ շարժերի ներկայացում (Հյուսիսային պողոտա)

Ժամը՝14:00-15:00 - Մնջախաղային էտյուդ («Հանրապետության հրապարակ» մետրոյի կայարան)

Ժամը՝ 15:00-17:00 - «CITY OF US» ինտերակտիվ արվեստի նախագիծ (Նկարիչների միության տարածք)

Ժամը՝ 15:00-17:00 եւ 17:30-19:30 - «Օդապարուկի նկարազարդում» (Գեղագիտական արվեստի կենտրոնի մանկական արվեստի թանգարան)

Ժամը՝ 16:00- «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագիր

Ժամը՝19:00 - Մնջախաղի ներկայացում (Երեւանի կինոյի եւ թատրոնի ինստիտուտի դահլիճ)

Ժամը՝ 19:00 - Բարոկո եւ ռոմանտիկ երաժշտության համերգ (Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն)

Արտաշատ

Ժամը՝ 11:00 - Նկարչական խմբերը նկարելու են թատրոնի շենքը, եկեղեցին, նախասրահում նկարելու են թատրոնի խաղացանկային տիկնիկային ներկայացումների կերպարներին, դերասաններին (Սուրբ Հովհաննես եկեղեցու բակ)

Ժամը՝14:00 - Ամո Խարազյանի անվան պետական թատրոնի փոքր դահլիճում ելույթ կունենան երգի եւ պարի համույթները՝

- «Նոր գույներ» պարային համույթ՝«Իշխանաց» պար, «Նազ պար»՝ Մանսուրյանի երաժշտությամբ
- Նազ-Նար ազգագրական երգի համույթ՝«Իմ Հայաստան» եւ «Սիրտս քոնն է Հայաստան» երաժշտական կատարումներով
- Ասմունքով հանդես կգա թատրոնի դերասանուհի Լաուրա Ստեփանյանը՝ Պ. Սեւակ «Հենց այնպես»

Վանաձոր

Ժամը՝ 16:00 - «Անուշ» մյուզիքլ՝ Արարատ քաղաքի Ղազարոս Սարյանի անվան միջնակարգ-մասնագիտական արվեստի դպրոցի սաների մասնակցությամբ (Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն):

ՌՈՔՆՌՈԼԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ

Ապրիլի 13-ին ամբողջ աշխարհը ռոքնռոլի օրն է նշում: 1962թ. հենց այս օրը «Բիթլզ»-ը ելույթ ունեցավ Համբուրգի «Star Club» ակումբում:

Ռոքնռոլը առաջացել է ԱՄՆ-ում 1950-ականներին: Այն իրենից ներկայացնում է ամերիկյան տարբեր երաժշտական ոճերի համակցություն: Գրեթե միաժամանակ, իրարից անկախ, բոլորին անծանոթ սեւամորթ երաժիշտները սկսեցին խառնել ռիթմ-ընդ-բլյուզ, բուգի-վուգի, քանթրի եւ գոսպել ոճերը: Ռոքնռոլի հետագա հանրաճանաչության մեջ մեծ դեր են ունեցել Բիլի Հեյլի «Rock Around The Clock» (որը ձայնագրվել է 1954թ. ապրիլին) եւ «Shake Rattle And Roll» ստեղծագործությունները: Չնայած նրան, որ դժվար է նշել այս ոճի առաջացման որոշակի ժամկետը, սակայն մասնագետները շատ հաճախ առաջնությունը տալիս են 1951թ. Այք Թյորների ձայնագրած «Rocket 88» երգին:

Սակայն անկախ ամեն ինչից՝ մինչեւ այսօր «ռոքնռոլի արքա» է համարվում Էլվիս Փրեսլին, ով երաժշտական եւ ոճային մեծ ազդեցություն է ուեցել ամբողջ աշխարհի երիտասարդ սերնդի վրա: 1960-ականների կեսերին ռոքնռոլի մեջ թարմ մտքեր եւ նոր կյանք ներմուծեց բրիտանական «The Beatles» խումբը, որը նորից երգեց ռոքնռոլային գրեթե բոլոր հայտնի հիթերը: Այդ շրջանում էլ սկսում է օգտագործվել «ռոք» եզրաբառը:

ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՔԱՏԱՐՆԵՐՆ ԵՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 21-րդ տուրը մեկնարկել է «Ուրարտու»-ի հաղթանակով, որը 2:1 հաշվով ուժեղ է եղել «Վան»-ից: Բռունո Միշելը դուբլի հեղինակ է դարձել, մեկ անգամ էլ աչքի է ընկել Բենիկ Հովհաննիսյանը: Ռոբերտ Արզումանյանի թիմը 42 միավորով առաջատարությունը կիսում է «Արարատ-Արմենիա»-ի հետ, որը տուրի կենտրոնական մրցավեճում 1:1 հաշիվն է գրանցել «Ալաշկերտ»-ի հետ խաղում: «Նոա»-ն էլ 3:0 հաշվով գերազանցել է «Գանձասար»-ին: Գոլերի հեղինակները Մաթեուս Աիասը, Սերգեյ Մուրադյանն ու Նարդին Մուլահուսեյնովիչն են: Տուրի կենտրոնական խաղում «Արարատ-Արմենիա»-ն հյուրընկալվելիս 2:0 հաշվով հաղթել է «Փյունիկին»: 24-րդ րոպեին նշանակված 11-մետրանոցը դիպուկ է իրացրել Խուան Բալանտան: Ավելացված ժամանակում էլ վերջնական հաշիվն ամրագրել է Ուգո Օլիվեիրան: ԲԿՄԱ - «Շիրակ» խաղում գոլազուրկ ոչ-ոքի է գրանցվել: Հաղթանակի շնորհիվ «Արարատ-Արմենիա»-ն վաստակել է 42 միավոր եւ «Ուրարտու»-ի հետ կիսում է առաջատարությունը: «Փյունիկը» 41 միավորով եզրափակում է լավագույն եռյակը:

«ԻՆՏԵՐ»-Ը ՀԱՂԹԱՆԱԿ Է ԿՈՐՁԵԼ

Իտալիայի առաջնության 32-րդ տուրում «Կոմո»-ն սեփական հարկի տակ ընդունել է «Ինտեր»-ին:

Հանդիպումն ավելի հաջող սկսել են տանտերերը եւ երկու գնդակ ուղարկել մրցակցի դարպասը: Սակայն միլանյան ակումբը կարողացել է հավաքվել ու ոչ միայն հավասարեցնել հաշիվը, այլ նաեւ վերջնական հաղթանակ կորզել: «Ինտե»-ն առավելության է հասել 4:3 հաշվով ու 75 միավորով ամրապնդվել առաջատարի դիրքում: Հենրիխ Մխիթարյանը հանդիպումը սկսել է պահեստայինների նստարանին, այնուհետեւ դուրս է եկել փոխարինման:

Խաղից հետո «Ինտեր»-ի գլխավոր մարզիչ Կրիստիան Կիվուն ասել է, որ իր սաները բնավորություն են ցույց տվել ու պայքարել մինչեւ վերջ:

«Մրցակիցը կռիվ էր տալիս ու շատ հաջող հանդիպում անցկացնում, բայց 0:2 հաշվից հետո մենք վերադարձանք: Պետք է շարունակենք պայքարն ու նույն վստահությամբ գործենք նաեւ հետագայում»,- ասել է մասնագետը:

ԿԴԱՌՆԱ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ ՌԱԿԵՏ

Աշխարհի երկրորդ ռակետ Յանիկ Սիները նվաճեց Մոնտե Կառլոյի «Մասթերսի» տիտղոսը: Եզրափակչում իտալացի թենիսիստը 7:6 (7:5), 6:3 հաշվով պարտության մատնեց աշխարհի առաջին ռակետ, իսպանացի Կառլոս Ալկարասին: Պայքարը տեւեց 2 ժամ եւ 14 րոպե: Սիները հաղթեց երրորդ անընդմեջ «Մասթերսում» եւ հաջորդ շաբաթ դարձյալ կգլխավորի Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի դասակարգման աղյուսակը:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ապրիլի 16-ին՝ժամը 19:00-ին, կկայանա «Ռոմեո եւ Ջուլիետ» բալետը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ անել, եթե անձը ոստիկանության բաժնում ենթարկվել է բռնության:

Վազգեն Սիարոնյան, 39 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. *(Սկիզբը՝ նախորդ համարում)* Կարեւոր է նաեւ հիշելը, որ ոստիկանություն տարվելու ճանապարհին ոստիկանական մեքենայում յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրականացնելու տեսանկարահանում: Նման տեսանկարահանումը ստիպում է ոստիկաններին գործել օրենքի շրջանակներում:

Միաժամանակ, անհրաժեշտ է հիշել, որ քրեական հետապնդման մարմինը պարտավոր է ապահովել բերվածի իրավունքների իրականացումը՝ բերվածի իրավունքները գրավոր պարզաբանելու, նրան առնվազն մեկ զանգի հնարավորություն ընձեռելու, բերվածի փաստաբանի մուտքը չխոչընդոտելու եղանակներով:

Եւ հիշե՛ք. խիստ կարեւոր է, որ ոստիկանություն հասնելուց հետո հնարավորինս շուտ ունենաք փաստաբան, քանի որ փաստաբան ունենալու պարագայում ոստիկանները կվախենան բռնություն գործադրել Ձեր նկատմամբ:

Պետք է նաեւ հաշվի առնել, որ բռնություն գործադրելուց հետո ոստիկանները միգուցե փորձեն Ձեր նկատմամբ «փափուկ» լինել, Ձեր սիրտը շահել եւ նույնիսկ ինչ-որ թվացյալ արտոնություններ խոստանալ՝ բռնության համար բողոք չներկայացնելու դիմաց: Սակայն այդ խոստումները պահվում են այնքան ժամանակ, քանի դեռ Ձեր մարմնին առկա են բռնության հետքերը: Հետքերն անհետանալուց հետո ոստիկանները ոչ միայն չեն պահի խոստումները, այլ նաեւ նորից կդիմեն բռնության՝ հասկանալով, որ խոչընդոտներ չկան:

ՀՀ ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հիշե՛ք նաեւ, որ բացի ֆիզիկական բռնությունից, Ձեր նկատմամբ կարող է կիրառվել հոգեբանական բռնություն (օրինակ՝ սպառնալիք), որը եւս ապօրինի է եւ հավասարապես հետապնդվում եւ պատժվում է Քրեական օրենսդրությամբ:

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Լրագրողը տեսանկարահանում է ինձ, սակայն ես չեմ ցանկանում: Դա օրինակա՞ն է:

Վազգեն Ալոյան, 42 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. *(Սկիզբը՝ նախորդ համարում)* Նման դեպքերում, երբ լրագրողը տեսնում է, որ Դուք Ձեր գործողություններով ողջամիտ քայլեր եք ձեռնարկում նրա տեսադաշտում չհայտնվելու համար, կամ, օրինակ, առնվազն ակնկալում եք, որ չեք գտնվում լրագրողի տեսադաշտում, ապա լրագրողն իրավունք չունի կատարած տեսաձայնագրումը տարածել: Ավելին, լրագրողն իրավունք չունի նաեւ գաղտնի կամ թաքուն տեսաձայնագրել կամ տեսանկարահանել Ձեզ եւ տարածել դա՝ բացառությամբ այն դեպքերից, երբ, օրինակ, դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար:

Ամեն դեպքում, եթե չեք ցանկանում, որ լրագրողը տեսնկարահանի Ձեզ, ապա պետք ձեր գործողություններով բավարար միջոցներ ձեռնարկեք՝ Ձեզ չտեսանկարահանելու համար (լրագրողի տեսադաշտից հեռանալ, լրագրողական լուսաբանման վայրից հեռանալ եւ այլն): Սակայն եթե դուք գտնվում եք հանրային ինչ-որ միջոցառման, որը լուսաբանում են լրագրողները, եւ չեք հեռանում կամ չեք ցանկանում հեռանալ այդ միջոցառման տարածքից, փոխարենը՝ լրագրողից պահանջում եք, որ Ձեզ չնկարի, դա դեռ չի նշանակում, որ Դուք ձեռնարկում եք բավարար միջոցներ՝ լրագրողի տեսադաշտից հեռանալու համար: Եվ այդ դեպքում լրագրողը իրավասու է առանց Ձեր համաձայնության լուսաբանել միջոցառումը, տեսանկարահանել նաեւ միջոցառման վայրը հանդիսացող այն հատվածները, որտեղ նաեւ Դուք եք գտնվում, եւ տարածել իր լրատվամիջոցով:

Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե կարծում եք, որ լրագրողի կողմից խախտվել է Ձեր իրավունքները, ապա կարող եք տվյալ լրատվամիջոցին ներկայացնել պահանջ՝ չհրապարակելու լրագրողի արձանագրած նկարները կամ տեսանյութերը, որոնց մեջ նաեւ գտնվում եք Դուք՝ ներկայացնելով մանրամասն պատճառաբանություն:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Խոշոր ավտովթար Արարատի մարզում. «Hyundai Tucson»-ը դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ մի քանի պտույտ գլորվելով՝ կողաշրջված հայտնվել դաշտում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 1 - 9 0 + 4
	Կոտայքի լեռներ	- 4 - 8 + 1 + 4
	Կոտայքի նախալեռներ	- 1 + 1 + 6 + 9
	Գեղարքունիք	- 3 - 8 + 2 + 5
	Լոռի	0 - 5 + 5 + 9
	Տավուշ	0 - 3 + 6 + 9
	Արագածոտնի լեռներ	- 4 + 8 + 1 + 4
	Արագածոտնի նախալեռներ	- 1 + 2 + 6 + 10

	Արարատ	+ 1 + 4 +10 + 12
	Արմավիր	+ 2 + 5 +12 + 15
	Վայոց ձորի լեռներ	- 4 - 7 + 1 + 5
	Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 5 +12 + 15
	Սյունիքի լեռներ	- 3 - 6 + 3 + 6
	Սյունիքի նախալեռներ	0 - 3 + 8 + 12
	Սյունիքի հովիտներ	+ 2 + 5 +14 + 18
	Երեւան	0 + 2 +10 +12

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*